ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 13 » Դեկտեմբերի 2012 թվականի N 20 – Ն

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2013 Թ–Ի ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության « Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 10 - րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակա - ռավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 18–րդ կետի դրույթներով՝ ***համայնքի ավագանին որոշում է .***

Սահմանել Սիս համայնքում տեղական տուրքերի 2013 թ-ի հետևյալ դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների/ներառյալ ոչ հիմնական / շինարարության / տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական / ամառանոցային/ տների,ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարարական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ .

բ. սույն կետի 1-ին ենթակետի « ա » պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

գ. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ ,

դ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ ,

ե. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

զ. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ .

է. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2) Սիս համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետա - շինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է՝ 1500 դրամ .

բ. բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի « ա » պարբերությամբ սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի1-ին ենթակետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը:

3) Սիս համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 2500 դրամ :

4) Սիս համայնքի վարչական տարածքում ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տեղական տուրքը սահմանվում է ՝ 2500 դրամ:

5) Սիս համայնքի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տեղական տուրք սահմանվում է ՝ 2500 դրամ:

6) Սիս համայնքի վարչական տարածքում ՝

ա. բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

բ. հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ արևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ՝ 150000 դրամ:

7) Սիս համայնքի վարչական տարածքում ՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 40000 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 300000 դրամ.

դ. խաղատների կազմակերպման համար՝ 750000 դրամ.

ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300000 դրամ.

զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 125000 դրամ:

8) Սիս համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է ՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդով արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ .

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ .

գ. այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

դ. դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9) Սիս համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000 դրամ.

10) Սիս համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 դրամ:

2. Սիս համայնքի վարչական տարածքում բոլոր վճարողների համար սահմանել տեղական տուրքերի միասնական դրույքաչափեր:
3. 2013 թ-ի համար տեղական տուրքերի դրույքաչափերի փոփոխություններ չեն կարող կատարվել:
4. « Տեղական տուրքերի և վճարների մասին » << Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել է 0,5 գործաքցի կիռարմամբ:
5. Տեղական տուրքերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դնել կրտսեր խմբի առաջին կարգի մասնագետի վրա:
6. Տեղական տուրքերը հաշվարկելու, և գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Ավագանու անդամներ՝

Կողմ (4) **Դեմ (0)** **Չեռնպահ(0)**

Ն. Սեյրանյան
Ա. Բեգունց
Թ. Քիշմիրյան
Հ. Մելքոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2012 թ. Դեկտեմբերի 13
գ. Սիս